



ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ՇԱԿԱՏՈՒՄ

ՀՅՈՒԼԵՍՏ ԶՈՆՍՈՆԻ ԵԼՈՒՅՑԲԸ

ՀՈՆԴՈՆ, 4 մարտի (ՏԱՍՍ). — Ինչպես հաղորդում է Ասոսիելը՝ պրես գործակալությունը, խաղաղության պաշտպանության Ստեղնի (Չոնգոն) տեղական խորհուրդը երեկ կազմակերպել է միտինգ, որտեղ հանդես է եկել Քենտրոնի տաճարի վանահայր Հյուկետ Ջոնսոնը:

Անդրադառնալով Անգլիայի տնտեսական դրությանը, Չոնսոնը նշել է, որ «պնկերը բարձրանում են, սոցիալական միջոցառումները նվազեցվում են, կրծատվում են լուսավորության, բնակելի տների ու հիվանդանոցների շինարարության համար կատարվող հատկացմաները»: Նրանց սպառնում է կատաստրոֆը»:

Քննադատելով այն քաղաքագետներին, որոնք հաճախ շաղակրատում են Սովետական Միության զինված ուժերի մասին, Չոնսոնը հայտարարել է. «Ծնչպե՞ս են նրանք միմյանց հետ մրցակցում ուստական բանակների թվական կազմը գնահատելիս: Նրանք խոսում են այնպես, ասես իրենց ամեն ինչ հայտնի է: Եինուելը հայտարարեց, թե ուստաները զենքի տակ ունեն 2,5 միլիոն մարդ: Սարեշին այդ թիվը դարձեց 4 միլիոն, որից հետո Եինուելը, ետ շմառում համար, այն հասցրեց 4,5 միլիոնի: Ի՞նչ են մտածում նրանք»:

Կանգ առնելով Ամերիկայում սպառազինությունների մրցավագբի վրա, Չոնսոնն

ընդգծել է, որ այդ կործանարար քաղաքականության համար պատասխանատվությունը կրում է «վերնախավերի կվիկը», իսկ ամերիկացիների ձնշող մեծամասնությունը պատերազմ չի ցանկանում: «Ամերիկացիների մեծ մասը, — ասել է նա, — ընդհանրապես չգիտե, թե ինչ է կատարվում: Ես կցանկանայի պատմել նրանց այդ մասին: Հենց այն պատճառով ինձ չեն թողնում Ամերիկա, որպեսդեռ ես չկարողանամ ամերիկացիներին պատմել այն, ինչ կատարվում է:»

Մեզմական պատրաստությունները փրկություն են ծառայում ամերիկյան խոշոր կապիտալի համար: Յուրաքանչյուր միլիոն դոլարը, որ Սովետական Միությունում ծախսվում էր պատերազմի վրա, ծանր հարված էր խաղաղ տնտեսական զարգացման նրա պլաններին: Բայց յուրաքանչյուր միլիոն դոլարը, որ ուսզմական պատրաստության համար ծախսվում է ԱՄՆ-ում, մի կուտ է արդյունաբերության համար, որի մեջ, հակառակ դեպքում, առաջ կգար հրակայական գործազրկություն և հնարավոր է, սոցիալական ուղղուցիչա»:

Հյուկետ Ջոնսոնը իր ելույթն ավարտել է հետեւյալ խոսքերով, որոնք ընդունվել են ծափահարություններով. «Աշխատեցե՛ք հանուն խաղաղության, և բարեկամության ձեռք մեկնեցե՛ք Ռուսաստանին ու Չինաստանին»:

ՖՐԵՇԵՐԻԿ ԺՈԼԻՈ-ԿՅՈՒՐԻՒ ԿՈԶԸ

ՓԱՐԻԶ, 10 մարտի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի նախագահ Ֆրեդրիկ Շոլփո-Կրոպին ամբողջ աշխարհի ժողովուրդներին դիմել է հետևյալ կոչով.

«Ես ծանոթացա այս հովիլ ուղերձին, որով Խաղաղության պաշտպանության համար և ամերիկյան ազգեսիայի դիմ պայքարի շինական ժողովորդական կոմիտեի նախագահ Գո-Մո-ժոն ինձ հաղորդում է, որ ամերիկյան պինված ուժերը կորեայում գործադրել են բակտերիոլոգիական զենք: Հունվարի 28-ի և փետրվարի 17-ի միջև ընկած ժամանակամիջոցով ամերիկյան ռազմական ինքնաթիւնները Կորեայում, ինչպես ռազմականությամբ, այնպես էլ թիկունքում, տարածել են ժամանակամատի, խողերայի, տիֆի և ուրիշ սարսափելի վարակիչ հրվանդությունների միջրոդներ:

Այդ դաժան, բոլոր խելացի մարդկանց համար աներեակալի գործողությունները այնուամենայնիվ կատարվել են: Դրանք իրենցով լրացնում են ոչ պակաս հրեշտակոր այն հանցագործությունները, երբ մի քանի վայրկյանի ընթացքում ատոմային ռումբով ոչնչացվեցին իրուսիմա քաղաքի հարյուր հազարավոր բնակիչներ:

Բակտերիոլոգիական զենքի օգտագործումը հանդիսանում է 1925 թվականի հունիսի 17-ին Ժընկում ստորագրված միջազգային արձանագրության բացահայտ խախտում:

Բակտերիոլոգիական զենքը ճապոնական զորքերի կողմից օգտագործված է Չինաստանում, ԱՄՆ-ի գլխավոր շտաբը և քաղաքական գործիչներն արդեն հրապարակորեն հայտարարել են իրենց նախապատրաստությունների և այդ զենքի օգտագործելու դիտավորությունների մասին:

Այդ հանցագոր գործողությունները հակառակ են Խաղաղության կողմնակիցների վարչավայրի համաշխարհային կոնգրեսի ընդունած որոշումներին, կոնգրես, որն արտահայտեց բոլոր ժողովուրդների կամքը, հակասում են նրա բանաձևին, որը նախատեսում է բակտերիոլոգիական, քիմիական ու մասսայական ոչնչացման ամեն մի այլ զենքի օգտագործման արգելումը:

Պահանջելով այդ արգելումը, 500 միլիոն տղամարդիկ և կանայք, որոնք պաշտպանեցին Ստոկհոլմի Կոչը, պարզ արտահայտեցին իրենց կամքը՝ այլևս թուլ շտալ, որ կրկնվեն նման սպանությունները:

Այսօր ժողովուրդները կարող են պատկերացնել այն վտանգը, որ իրենց սպանում է, և այն սարսափելի միջոցները, որոնցով փորձում են իրենց վախեցնել: Հասարակական կարծիքը պետք է հանդես գա այդ հանցագործության դիմ:

ՖՐԵՇԵՐԻԿ ԺՈԼԻՈ-ԿՅՈՒՐԻՒ»

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԱԿԻՑՆԵՐԻ ՍՄԵՐԻԿԱՆ ԿՈՆՏԻՆԵՆՏԱԼ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՄՈՆՏԵՎԻԴԵՈ, 19 մարտի (ՏԱՍՍ).— Մարտի 11-ից մինչև 16-ը Մոնտեվիդեոյում տեղի ունեցած Խաղաղության կողմնակիցների ամերիկյան կոնտինենտալ կոնգրեսը: Կոնդրեսն ընդունեց բանաձև, որի մեջ ասվում է.

«Մեր երկրներում ուժիղանում է պատերազմի նախապատրաստության ու պատերազմի պրոպագանդան, որի նպատակն է մեր ժողովուրդներին նետել նոր համաշխարհային հրեհի մեջ»:

Բանաձևում նշվում է, որ բոլոր այդ իրադարձությունները, որոնց հետևանքները սպառնում են ժողովուրդների բարեկեցության ու անվտանգությանը, ամենից առաջ հետևանք են պատերազմի այն քաղաքականության, որ վարում են Միացյալ Նահանգների կառավարող շրջանները, որոնք չեն ցանկանում ընդունել տարրեր սոցիալական

սիստեմների խաղաղ գոյակցության սկզբունքը:

Պատերազմի այդ քաղաքականությունը, ասվում է բանաձևում, մեր ժողովուրդներին պարտադրում է հարկերի ծանր բեռ, առապելական և անտանելի ռազմական բյուզեներ, տնտեսական այնպիսի համաձայնագրեր ու պայմանագրեր, որոնք վնաս են հասցնում մեր շահերին: Այդ քաղաքականությունը տանում է գեղի նավթի, պղնձի, անապի, գլուզատնտեսության մթերքների և մեր բարեկեցության ու պլոգրեսի համար անհրաժեշտ բոլոր մյուս հարստությունների բոլոր զավթում: Եվ, վերջապես, այդ քաղաքականությունը մեղնից պահանջում է զինվորներ ու ռազմական բազաների հատկացում մեր երկրների տերիտորիայում:

«Այդ պատճառով ներկա կոնգրեսը դատա-

պատում է պատերազմի այդ քաղաքականությունը և հայտարարում է, որ ու մի պատրվակով, անկախ համաձայնության գալու, Ամերիկայի ժողովորդների միջև եղբայրության ու համերաշխության սկզբունքների ամեն մի վկայակոչումից, մենք շենք կարող մասնակցել այն պատերազմին, որը հակասում է մեր նվիրական զգացմունքներին և մարդկության ամենակենսական շահերին», «Խաղաղությանը շեն սպասում, խաղողությունը նվաճում են», — այս պետք է մենք մեր նշանաբանը, ասվում է բանաձևում: Մենք պնդում ենք, որ փոխըմբունման վրա հիմնված և դեպի միջազգային տարածալությունների լուծումը, դեպի զինաթափում, տնտեսական ազատ համագործակցություն, առողմային զենքի արգելում, ազգային սուվերենության հարգում, գերմոկրատական իրավունքների լիակատար ճանաչում, ժողովորդների նյութական ու հոգալոր ազատ զարգացում տանող խաղաղությունը, — արդպիսի խաղաղությունը մեր բարձրագույն ձգտումն է և համապատասխանում է ամերիկյան մայրամարդի ժողովորդների պայքարի պատմական տրադիցիային:

Կոնգրեսն այն եղբակացության հանգեց, որ մեր ազնիվ իդեալների իրականացման ամենագործուն և վճռական միջոցը համաձայնությունն է հինգ մեծ տերությունների միջև՝ Խաղաղության Պակտ ստորագրելու միջոցով: Խաղաղության կողմնակիցների կոնգրեսը Ամերիկայի ժողովորդներին կոչ արեց:

«1. Պայքարել աստիճանական, միաժամանակյա և վերահսկվող զինաթափման համար, առողմային զենքի արգելու և այդ արգելի կատարման նկատմամբ խիստ վերահսկություն սահմանելու համար, առողմային էներգիան բացառապես խաղաղ նպատակներով օգտագործելու համար:

2. Պայքարել Կորեա զորքեր ուղարկելու դեմ և կորեական կոնֆլիկտը խաղաղ կարգավորելու համար:

3. Բոլոր միջոցներով դատապարտել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգների որոշակի շրջանների կողմից վարվող պատերազմի քաղաքականությունը, պայքարել միլիտարիզացիայի և պատերազմի նախապատրաստության դեմ, դատապարտել այն ուղղական համաձայնագրերը, որը կառավագում է աշխարհի բոլոր ժողովորդների իրազը:

ամերիկյան կառավարությունները, համաձայնագրեր, որոնք պահանջում են զոհաբերելու մեր երիտասարդությանը, ժողովորդների նյութական և կուսական պրոգրեսը և ազգային սուվերենությունը:

4. Դատապարտել պատերազմի պրոպագանդայի բոլոր ձեռքրբ:

5. Արտահայտվել խաղաղության մարտիկներին հալածելու դեմ, դեմոկրատական իրավունքների ճնշման դեմ, ուսանական խորականության դեմ և համերաշխվել այդ հալածանքների բոլոր զոհերի հետ:

6. Պայքարել մեր բնական հարստությունները պաշտպանելու համար, հասնել այն բանին, որպեսզի դրանք օգտագործվեն հօգուտ մեր ժողովորդների միջև տնտեսական զարգացման և բարեկեցության շահերի:

7. Պահանջել վերացնելու սահմանափակումները երկրների միջև տնտեսական, գիտական ու կուսուուրական ազատ փոխանակման սապարեզում, որը նպաստում է ժողովորդների միջև խաղաղության և համագործակցության ամրապնդմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

8. Ուժեղացնել հինգ մեծ տերությունների՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգների, Սովետական Միության, Չինական Ժողովորդական Ռեսպուբլիկայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումի ստորագրման կամպանիան, պահու, որին կարող էին միանալ երկրագնդի բոլոր պետությունները:

Կոնգրեսն ի միջի այլոց ընդունեց նաև դիմում՝ ուղղված Ամերիկայի ժողովորդներին:

Կոնգրեսը նաև ընդունեց բանաձեռ, որը դատապարտում է բակտերիոլոգիական զենքի գործադրումը Կորեայում:

«Նման զենքի գործադրումը, ասվում է բանաձեռ, իրենից ներկայացնում է պատերազմական հրեշտակու ոճագործություն, որը զայրացնում է աշխարհի բոլոր ժողովորդների իրիզը:

Կոնգրեսը պահանջում է անհապաղ դադարեցնել այն զենքի գործադրումը կորեական ժողովորդի դեմ, Կոնգրեսը Ամերիկայի ժողովորդներին կոչ է անում եռանդուն կերպով ու վճռականորեն բողոքել նման գործողությունների դեմ»:

